

---

## **ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՎԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 1992-2005 ԹԹ.**

### **ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորանկախ Հայաստանի Հանրապետության համար առաջացան և նոր դժվարություններ, և նոր հնարավորություններ մշակութային ու գիտական համագործակցության բնագավառներուն: ՀՀ-ն հնարավորություն ստացավ վարելու ինքնուրույն գիտական, կրթական և մշակութային քաղաքականություն: Ի թիվս այլ երկրների՝ ՀՀ-ն 1992 թ. փետրվարի 9-ին դիվանագիտական հարաբերություններ հաստատեց իր հարավային հարևան իրանի հւլանական Հանրապետության հետ:

ՀՀ - ԻԻՀ գիտակրթական ու մշակութային կապերի սկզբնավորման համար կային երկողմ հետաքրքրություններ: Խորհրդային տարիներին Հայաստանի և ԻԻՀ-ի միջև գիտամշակութային կապերը թույլ էին: Դա պայմանավորված էր մի շարք պատճառներով. Խորհրդային Հայաստանը և ԻԻՀ-ը թեև սահմանակից երկրներ էին, սակայն անմիջական կապ նրանց միջև չկար, և եղած հարաբերությունները միջնորդավորված էին՝ ի դեմս Մոսկվայի: Խորհրդային Հայաստան - ԻԻՀ գիտամշակութային կապը հիմնականում ապահովվում էր իրանահայ համայնքի և առանձին կազմակերպությունների գործունեությամբ:

ԻԻՀ-ի հետ գիտակրթական և մշակութային կապերի պաշտոնական գործընթացը սկսվում է 1992 թ. մայիսի 6-8-ը ՀՀ նախագահի ԻԻՀ կատարած այցից հետո: Բանակցությունների արդյունքում երկու երկրների նախագահների միջև ստորագրվում է «Համատեղ հայտարարություն ՀՀ և ԻԻՀ միջև համագործակցության, բարեկամության և բարիդրացիության մասին» փաստաթուղթը<sup>1</sup>, որի 11-րդ հոդվածում նշվում է, որ կողմերը գիտության, կրոնի, արվեստի, գրականության, բժշկության, առողջապահության, լրատվության, ռադիոյի և հեռուստատեսության, կինոյի, տուրիզմի և սպորտի բնագավառներում կապեր ստեղծելու ուղղությամբ միջոցներ կձեռնարկեն և նշված բնագավառներում կփոխանակեն համապատասխան պատվիրակություններ: Ըստ եռթյան՝ այս փաստաթուղթը դարձավ երկողմ մշակութային համագործակցության պաշտոնակես հրչակված ծրագիր, սակայն հաջորդող երկու տարիներին մշակութային կապերը խիստ համեստ էին, որը պայմանավորված էր արցախյան պատերազմով:

<sup>1</sup> Տես ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ (այսուհետ՝ ՊԴԱ), գ. 1, գ. 182, թ. 63:

Երկկողմ գիտամշակութային կապերի խորացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1994 թ. նոյեմբերի 27-ին Թեհրանում ստորագրված «ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև մշակույթի, գիտության, սպորտի, տուրիզմի և զանգվածային լրատվամիջոցների բնագավառներում համագործակցության» համաձայնագիրը, որով սահմանվեց գիտամշակութային համագործակցության օրակարգը:

Երկկողմ գիտակրթական և մշակութային համագործակցությունը որակապես նոր փուլի հասավ 2001-ից հետո, որը պայմանավորված էր 2001 թ. դեկտեմբերի 25-27-ը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ԻԻՀ կատարած պաշտոնական այցով:

Խնդրո առարկա ժամանակահատվածում ՀՀ-ի և ԻԻՀ-ի համագործակցությունը գիտամշակութային ոլորտում կարելի է բաժանել մի քանի ճյուղերի:

#### **գիտական՝**

- հումանիտար գիտություններ՝ հայագիտություն և իրանագիտություն,
- հիմնարար գիտություններ՝ սեյսմոլոգիա, երկրաֆիզիկա և բժշկագիտություն,

#### **կրթական՝**

- միջդպրոցական,
- միջրուղական,
- գիտակրթական,

#### **մշակութային՝**

- հոգևոր-մշակութային,
- արվեստ (կինոփառատոններ, ցուցահանդեսներ և այլն):

Հայագիտության բնագավառում ԻԻՀ-ում գործում են հայագիտական երկու ամբիոն, որոնցից առաջինը՝ Սպահանի համալսարանի հայագիտության ամբիոնը, իհմնադրվել է 1962 թ., իսկ երկրորդը՝ Թեհրանի իսլամական ազատ համալսարանի հայագիտության ամբիոնը, իհմնադրվել է 1995 թ.<sup>2</sup>: Վերջինս ստեղծվել է Երևանի Յ. Աճառյանի անվան համալսարանի հետ կնքված պայմանագրի շրջանակներում՝ Յ. Աճառյանի համալսարանում իրանագիտության ֆակուլտետ իհմնելու պայմանով: Նշենք, որ հայագիտության ամբիոնում ուսումնական գործընթացը տևում է չորս տարի: Դասավանդվում են հայոց լեզու (շաբաթական 3 ժամ՝ 2 տարի), հայ գրականություն՝ իհմն, միջին և հայոց պատմություն (շաբաթական 2 ժամ՝ 1 տարի), պարսից լեզու (շաբաթական 4-6 ժամ՝ 1 տարի) և այլ առարկաներ: Թեհրանի իսլամական ազատ համալսարանի հայագիտության ամբիոնը 1999 թ. ուսումնական տարում տվեց առաջին շրջանավարտները (ընդունված տասնյոթ հոգուց տասը հայեր էին): Ինչ վերաբերում է ՀՀ-ում իրանագիտության զարգացմանը, ապա պետք է նշել, որ 2005 թ. դրությամբ ՀՀ բուհերի մագիստրատուրաներում և ասպիրանտուրաներում սովորել են շուրջ 300

<sup>2</sup>Տե՛ս նույն տեղը, ց. 8, գ. 86, թ. 34:

արևելագետներ, իսկ պարսկերենը ՀՀ-ում համարվում է ընդունելության քննության առարկա: Նոյեմբերի 2005 թ. դրությամբ ՀՀ-ում սովորություն էին մոտ 1300 իրանցի ուսանողներ<sup>3</sup>:

ԻԻՀ-ը հատկապես մեծ հետաքրքրություն է դրսերում ՀՀ-ի գիտատեխնիկական ներուժի, ինչպես նաև իմնարար գիտությունների բնագավառում նրա ունեցած ձեռքբերությունների նկատմամբ: Այս բնագավառում կան համագործակցության անսպառ հնարավորություններ: Ներկայումս հայ և իրանցի գիտնականները սերտորեն համագործակցում են նաև սեյսմիկ պաշտպանության ոլորտում, որը երկուստեք ունի կենսական նշանակություն<sup>4</sup>:

Հայ-իրանական համագործակցությունը սեյսմիկ ոլորտում կրկնակի է արժնորվում այն առումով, որ երկու պետությունները, գտնվելով միևնույն սեյսմիկ համակարգում, կարիք ունեն փորձի փոխանակման և աղետների ժամանակ փոխօգնության: Դիշալ նպատակն էր հետապնդում 1992 թ. Թեհրանի համալսարանի երկրաֆիզիկայի ինստիտուտի և ՀՀ կառավարության առջնորդ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության միջև ստորագրված փոխսըմբռնման հուշագիրը, ինչպես նաև «Տարածաշրջանային սեյսմիկ անվտանգության համակարգ» ստեղծելու մասին համատեղ հայտարարությունը<sup>5</sup>:

Սեյսմիկ ոլորտում համագործակցությունը նշանավորվեց ոչ միայն երկկողմ, այլև եռակողմ ձևաչափով: 1999 թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ-ի, Հունաստանի Հանրապետության և ԻԻՀ-ի միջև ստորագրված փոխսըմբռնման հուշագրի համաձայն և 2000 թ. հունիսի 17-ին եռակողմ համագործակցության գործադիր կոմիտեի՝ Թեհրանում տեղի ունեցած չորրորդ հանդիպությունից հետո 2001 թ. հունիսի 2-ին Երևանում տեղի ունեցավ Տարածաշրջան հատակագծման և քաղաքաշինության կոմիտեի առաջին հանդիպությունը<sup>6</sup>: Կողմերը պայմանավորվեցին համագործակցել սեյսմակայուն շինարարության ոլորտում, անհրաժեշտ համարվեց քաղաքաշինական գործունեության բնագավառում լիցենզիաների փոխադարձ ճանաչումը, ցուցահանդեսների և սեմինարների կազմակերպումը և այլն:

2000 թ. նոյեմբերի 11-ին կայացավ ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգապետարանի պատվիրակության այցը Երևան, որը գլխավորում էր նահանգապետարանի տեխնիկական գրասենյակի գլխավոր տնօրեն Զավադ Ռահմաթին<sup>7</sup>: ՀՀ ՍՊԱԾ պետ Ս. Բալասանյանի հետ ունեցած հանդիպման ընթացքում նշվեց, որ Իրանում բավականին լավ է զարգացած դիտարկումների ցանցը, իսկ ՀՀ ՍՊԱԾ տրամադրության տակ են ավելի քան 150 դիտակայած: ՀՀ ՍՊԱԾ-ը պատրաստականու-

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, գ. 11, գ. 184, թ. 56:

<sup>4</sup> Տե՛ս Վ. Բայբուրդյան, Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերությունից հետո, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ», հ. 17, Եր., 1998, էջ 16:

<sup>5</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», պաշտոնաթերթ, 9.05.1992:

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, գ. 11, գ. 183, թթ. 53-54:

<sup>7</sup> Տե՛ս նոյեմբերի 6-ին, գ. 67, թթ. 49-50:

թյուն հայտնեց գործնական քայլեր կատարելու թափրիզի շրջանի ուսումնասիրության ուղղությամբ, քանզի այդ տարածքը գտնվում է ՀՀ-ի հարավային շրջանների հարևանությամբ: ՀՀ ՍՊԱԾ պետը առաջարկում էր համագործակցության երեք հիմնական ոլորտ՝ ա) սեյսմիկ ռիսկի գնահատման և երկրաշարժերի կանխատեսման ոլորտ, բ) սեյսմիկ շրջանցում, այսինքն՝ այն աշխատանքները, որոնք ուղղված են սեյսմիկ ռիսկի նվազեցմանը, գ) վաղ ահազանգման համակարգի ստեղծում:

Ռահմաթին առաջարկում էր ՍՊԱԾ-ին մասնագետների պատրաստման հարցում համագործակցել թափրիզի համալսարանի հետ: Եր հերթին հայկական կողմը առաջարկում էր, մշակել և ստորագրել սահմանակից Սյունիքի մարզպետարանի և Վրևելյան Ատրպատականի նահանգապետարանի միջև:

Երկողմ համագործակցության նոր փուլը նշանավորվեց 2003 թ., երբ հոկտեմբերի 6-9-ը ՀՀ ՍՊԱԾ-ի հրավերով Երևան ժամանեց Թեհրանի սեյսմակայուն շինարարության և սեյսմոլոգիայի միջազգային ինստիտուտի պատվիրակությունը: Իրանական կողմը ՀՊՃՀ և Հայաստանի ամերիկյան համալսարան կատարած այցի ընթացքում պատրաստականություն հայտնեց ՀՀ-ի բուհերի շրջանավարտներին ընդունելու ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսանելու համար՝ հոգալով կացության և կեցության ծախսերը: Հայկական կողմը իր հերթին պատրաստականություն հայտնեց ընդունելու ուսանողներ քաղաքաշինության և սեյսմակայուն շինարարության մասնագիտություններով:

Պատվիրակությունը նաև մասնակցեց այդ օրերին Երևանում ընթացող կառուցվածքների սեյսմիկ մեկուսացման, էներգիայի տարածման և ակտիվ վիրուսացիայի վերահսկման համաշխարհային 8-րդ սեմինարի աշխատանքներին:

Հայ-իրանական միջկառավարական փոխընթանման հուշագրի կատարման շրջանակներում կնքվեց երեք պայմանագիր տեկտոնիկայի, սեյսմակայուն շինարարության և բնակչության իրազեկության ու Երկրաշարժերին պատրաստվածության վերաբերյալ: Ծնորհիվ այս ամենի սեյսմիկ պաշտպանության բնագավառում իհմք դրվեց Երկողմ համագործակցության նոր փուլի: ՀՀ-ում այդ աշխատանքները համակարգելու էր ՀՀ ԱԻՎ ՍՊԱԾ գործակալությունը, իսկ ԻԻՀ-ում՝ Թեհրանի սեյսմակայուն շինարարության և սեյսմոլոգիայի միջազգային ինստիտուտը:

Ակտիվ նախաձեռնությամբ հանդես եկավ նաև Երևանում ԻԻՀ-ի դեսպանությունը: Դեսպան Մ. Ֆ. Քոլեյնին 2003 թ. հոկտեմբերի 28-ին ԻԻՀ-ի դեսպանատանը հանդիպեց ՀՀ ԱԻՎ ՍՊԱԾ գործակալության պետի հետ<sup>8</sup>: Հատկանշական է, որ առաջարկվեց սեյսմիկ պաշտպանության համատեղ աշխատանք իրականացնել հարևանությամբ

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 95-96:

գտնվող Արևելյան Աստրապատական նահանգում և Սյունիքի մարզում: Այս հարցը քննարկվել էր դեռևս 2000 թ. Ռահմաբիի այցի ժամանակ, սակայն վերջնական լուծում չէր ստացել: Այսպիսով, սեյսմիկ ոլորտում հայ-իրանական համագործակցությունը զարգանում է շնորհիվ երկ-կողմ պետական շահագրգոռության:

Բժշկագիտության և առողջապահության բնագավառում ՀՀ - ԻԻՀ համագործակցությունը պաշտոնապես սկսվել է 1992 թ. մայիսի 7-ին՝ կողմերի միջև ստորագրված վերոնշյալ համատեղ հայտարարությամբ: Սակայն 1990-ականների սկզբին այդ համագործակցությունը սահմանափակվում էր միայն մի քանի հայ բժիշկների՝ ԻԻՀ երկամյա աշխատանքային գործուղումների կազմակերպմամբ, որոնք, սակայն, հետագայում ընդհատվեցին: Երկվողն համագործակցությունը համեմատաբար աշխուժացավ 1990-ականների կեսերին՝ շնորհիվ համապատասխան գերատեսչությունների դեկավարների փոխայցերի:

1995 թ. մայիսի 6-ին կողմերի միջև ստորագրվեց «Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիր, իսկ նույն թվականի հոկտեմբերի 31-ին՝ երկրորդ փոխըմբռնման հուշագիրը, որի 13-րդ հոդվածով իրանական կողմը պարտավորվեց ՀՀ-ում հիմնել դեղարտադրության գործարան կամ ՀՀ-ի հետ համագործակցելով՝ համալրել ու զարգացնել առկա գործարանները:

1996 թ. հունվարի 20-ին կողմերի միջև Թեհրանում ստորագրվեց փոխըմբռնման երրորդ հուշագիրը, որի 5-րդ հոդվածում իրանական կողմը մտադրություն էր հայտնում հայկական կողմին ներկայացնել ՀՀ-ում դեղարտադրության միավոր ստեղծելու իր ծրագիրը: 1996 թ. ապրիլի 23-ին փոխըմբռնման հուշագիր ստորագրվեց ՀՀ առողջապահության նախարարության և ԻԻՀ սոցիալական ապահովության կազմակերպության վարչության միջև, որով համաձայնություն ձեռք բերվեց հայ-իրանական համատեղ ձեռնարկություն ստեղծելու նասին, որը պետք է զբաղվեր բժշկական սարքավորումների, գործիքների, տեխնիկայի ու դեղորայքի ներմուծմամբ և արտահանմամբ: Սակայն այս հարցում էական առաջընթաց այդպես էլ տեղի չունեցավ, որովհետև վերը նշված երկկողմ փաստաթղթերով առողջապահական ոլորտում ամրագրված համագործակցության ծրագրերը գործնականում չափազանց համեստ էին և ընդհանուր առնամբ կրում էին դեկլարատիվ բնույթը:

Այս ոլորտում կրկին աշխուժացում նկատվեց 2000-ականների սկզբին, երբ կյանքի կոչվեց «Ֆարս-Արմեն» ՀԶ-Ը՝ 1 մլն դոլար արժողությամբ:

2005 թ. ապրիլի 18-20-ը Երևանում ԻԻՀ առողջապահության, բուժման և բժշկական կրթության փոխնախարարի գլխավորած պատվիրակությանը ընդունեց ՀՀ առողջապահության նախարարը: Իրանցի պաշտոնյան հայտնեց, որ իրենց այցի բուն նպատակն է ակտիվացնել հայ-իրանական հարաբերությունները առողջապահության ոլորտում, ինչ-

պես նաև այն դմել ավելի գործնական հիմքերի վրա<sup>9</sup>: Իրանական կողմը նշում էր չորս բնագավառ (ա. դեղերի, վակցինաների և բժշկական սարքավորումների արտադրություն, թ. բժշկական կրթություն, գ. սիրտանոթային հիվանդությունների բուժում, դ. օրգանների պատվաստումներ), որոնցում ԻԻՀ-ն հասել է առավել մեծ հաջողությունների և ցանկալի է փորձի փոխանակում ՀՀ-ի հետ: Փոխանախարարի հրավերով 2005 թ. մայիսի 25-26-ը «IRAN MED» բժշկական և դեղագործական տեխնոլոգիաների միջազգային 9-րդ ցուցահանդեսին մասնակցելու նպատակով ԻԻՀ մեկնեց ՀՀ առողջապահության փոխանախարարի գլխավորած պատվիրակությունը: Կողմերի միջև ստորագրվեց փոխընթացքնան հուշագիր: Սակայն այս դեպքում ևս երկկողմ պայմանագրային պարտավորություններում նախանշված ոչ բոլոր ծրագրերն են, որ գործնականում կյանքի են կոչվում:

Կրթական ոլորտում համագործակցությունը աչքի էր ընկնում իրանական կողմի՝ ՀՀ-ում պարսից լեզվի զարգացման ուղղությամբ կատարած քայլերով: Այսպես, ՀՀ-ի 12 դպրոցներում հարյուրավոր աշակերտներ ուսանում են պարսից լեզու: 1994 թ. հունիսի 22-ին Երևանի Յ. Պարոնյանի անվան թիվ 56-րդ պարսկերեն թեքումով դպրոցի աշակերտներն այցելեցին ԻԻՀ<sup>10</sup>:

ԻԻՀ-ի դեսպանության ուշադրության կենտրոնում է գիտակրթական համագործակցությունը մայր բուհի՝ ԵՊՀ-ի հետ: 1993 թ. հունվարին ԵՊՀ այցելեց ՀՀ-ում ԻԻՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Ա. Սորիհանին<sup>11</sup>: Իսկ 1996 թ. հուլիսի 16-ին պաշտոնական այցով ԵՊՀ-ում էր ՀՀ-ում ԻԻՀ դեսպանի ժամանակավոր պաշտոնակատար, դեսպանորդ Փ. Զեյնալին: Դանդիանան ընթացքում ԵՊՀ ուսկոր Ռ. Մարտիրոսյանը և դեսպանորդ Փ. Զեյնալին ստորագրեցին պայմանագիր արևելագիտության ֆակուլտետում պարսկերեն լեզվի և գրականության, Իրանի մշակույթի և պատմության խնդիրներով գրադպու ուսանողների և դասախոսների համար «Իրան» անունով կարինետի ստեղծման մասին<sup>12</sup>: 1996 թ. դեկտեմբերի 27-ին ԵՊՀ այցելեց ԻԻՀ առաջին փոխանախագահ Յ. Զաքիրին և ներկա գտնվեց արևելագիտության ֆակուլտետում պարսից լեզվի կարինետի բացմանը: 1997 թ. մարտի 20-ին ԻԻՀ փոխարտգործնախարար Մ. Վայեզին, ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Յ. Ռ. Նիքքար Էսֆահանին այցելեցին ԵՊՀ: ԻԻՀ դեսպանության միջոցով պարսից լեզվով ընտիր գրականություն նվիրեցին արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության կարինետին<sup>13</sup>:

ՀՀ-ում պարսկերենի տարածմանը իր նասնակցությունն է բերում ԻԻՀ դեսպանությունը: 1997 թ. հուլիսի 20-ին Երևանում տեղի ունեցավ

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 11, գ. 183, թթ. 35-36:

<sup>10</sup> Տե՛ս Վ. Բայբուրդյան, Իրանն այսօր, Եր., 1999, էջ 326:

<sup>11</sup> Տե՛ս «Երևանի պետական համալսարան, Տարեգրություն», Եր., 2009, էջ 299:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 323:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 324:

Հայաստանի պարսից լեզվի ուսուցիչների և դասախոսների հանդիպումը: Հանդիպման ժամանակ հիմնականում ՀՀ-ում պարսից լեզվի դասավանդման և միջնակարգ ու բարձրագույն մակարդակների համար դասագրքերի հրատարակման խնդիրները: Հանդիպմանը ներկա էր ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Համիդ Ուեզա Նիքքար Եսֆահանին, որը պատրաստակամության հայտնեց ՀՀ-ում պարսից լեզվի զարգացմանն աջակցելու մասին:

1998 թ. փետրվարի 13-ին արևելագիտության ֆակուլտետում բացվեց Ֆիրդուսու անվան իրանագիտության սրահը<sup>14</sup>:

Միջպետական համագործակցության շրջանակներում կարևոր էր 2001 թ. հունվարի 30-ից փետրվարի 1-ը ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվիրակության այցը ԻԻՀ: Կողմերի միջև ստորագրվեց դեռևս 1995 թ. նախարարության և գիտության նախարարության և ԻԻՀ մշակույթի և բարձրագույն կրթության նախարարության միջև գիտության, կրթության և գիտահետազոտական բնագավառներում համագործակցության վերաբերյալ» փոխընթացանան հուշագիրը և «ՀՀ կրթության և գիտության նախարարության և ԻԻՀ մշակույթի և բարձրագույն կրթության նախարարության միջև կրթության և գիտության բնագավառներում համագործակցության մասին 2001-2004 թթ. գործնական ծրագիրը»: 2001 թ. համաձայնագիր կնքվեց ՀՀ-ում և ԻԻՀ-ում գիտական աստիճանների և բուհերի ավարտական վկայականների ճանաչման վերաբերյալ:

Միջքուհական համագործակցությանն է վերաբերում նաև 2003 թ. նախարար Ս. Մոհնիի այցի ընթացքում ստորագրված «2003-2006 տարիների համար գործնական ծրագիրը», որի 1-5-րդ կետերի շրջանակներում ԵՊՀ-ն իր պատրաստակամությունը հայտնեց համագործակցել Սպահանի համալսարանի հետ հետևյալ ոլորտներում՝ ա) տարեկան մեկական դասախոսի փոխանակում ԵՊՀ պատմության և բանասիրության ֆակուլտետների և Սպահանի հայագիտության բաժինների միջև պատմության և արվեստի ոլորտներում, բ) տարեկան երկուական ուսանողների փոխանակություն Սպահանի համալսարանում՝ իրանագիտության և ԵՊՀ-ում՝ հայագիտության մեջ մասնագիտանալու նպատակով, գ) իրականացնել գրեթի և պարբերականների փոխանակություն երկու համալսարանների գրադարանների միջոցով, դ) կազմակերպել համատեղ արշավախմբեր ազգագրական և հնագիտական ուղղվածությամբ ՀՀ-ում և ԻԻՀ-ում, ե) երեք տարին մեկ կազմակերպել գիտաժողով Երևանում և Սպահանում՝ նվիրված հայագիտությանը և իրանագիտությանը և այլն<sup>15</sup>: Իրանցի նախարարը տեղեկացրեց, որ ԱՊՀ երկրների շարքում ՌԴ-ից հետո ամենաշատ իրանցի ուսանողներ սովորում են ՀՀ-ի բուհերում<sup>16</sup>:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 330:

<sup>15</sup> Տե՛ս ՀՀ նախարարության ՊԴԱ, գ. 10, գ. 89, թթ. 60-61:

<sup>16</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», պաշտոնաթերթ, 07.05.2003:

ԵՊՀ իրանագիտության ամբիոնը 2004 թ. ապրիլի 2-5-ը հյուրընկալեց միջազգային իրանագիտական կոնֆերանսի մասնակիցներին: Շուրջ քսան երկուներից ժամանած ավելի քան 70 մասնակիցներ ներկայացրեցին իրենց գեկույցները իրանագիտության բազմաթիվ հիմնախնդիրների վերաբերյալ: Կոնֆերանսի թեման էր «Հասարակությունը, պատմությունը և մշակույթը իրանական աշխարհում», կազմակերպելով էր նյու Յորքի պետական համալսարանում գործող «Իրանալեզու հասարակությունների ուսումնասիրության ընկերակցությունը» (ASPS: Association for the Study of Persianate Societies)<sup>17</sup>: 2004 թ. սեպտեմբերի 9-ին ԻԻՀ-ի նախագահ Մ. Խաբամին այցելեց ԵՊՀ: Ուկտոր Ռ. Մարտիրոսյանը հյուրին հանձնեց «ԵՊՀ պատվավոր դոկտորի» կոչման վկայական և ԵՊՀ հորեյանական ոսկե հուշամեդալ<sup>18</sup>:

2005 թ. մարտի 15-ին Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանում բացվեց իրանագիտության և մեկ ամբիոն:

Երկողմ գիտակրթական հարաբերությունները նշանավորվեցին մի շարք փոխադարձ այցերով: Այսպես, 2005 թ. հունվարի 15-19-ը ԻԻՀ այցելեց ՀՀ ԿԳ նախարար Ս. Երիցյանը: Հանդիպումներ տեղի ունեցան ԻԻՀ-ի կրթության նախարար Մ. Զաջիի, ԻԻՀ-ի գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարար Զ. Թոփիղիի հետ<sup>19</sup>: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ԵՊՀ-ի, ԵՊՃ-ի, Երևանի Մ. Զերացու անվան պետական բժշկական համալսարանի և իրանական մի շարք համալսարանների միջև ուղղակի համագործակցության վերաբերյալ:

2005 թ. հունիսի 13-16-ը պատասխան այցով Երևանում էր գտնվում ԻԻՀ կրթության և դաստիրակության նախարար Մ. Զաջիի գլխավորած պատվիրակությունը: Հունիսի 16-ին կողմերի միջև ստորագրվեց և ուժի մեջ մտավ «ՀՀ կրթության և գիտության նախարարության և ԻԻՀ կրթության և դաստիրակության նախարարության միջև կրթական համագործակցության մասին 2005-2008 թթ. համար» փոխընթացան հուշագիրը<sup>20</sup>: Երկողմ հանդիպմանը քննարկվեցին մի շարք հարցեր: Այսպես, եթե իրանական կողմի համար կարևորվում էր տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում համագործակցությունը, ապա հայկական կողմը հարց բարձրացրեց ԻԻՀ-ում հայկական դպրոցների՝ հայազգի փոխտնօրենների նշանակման մասին:

Այսպիսով, գիտակրթական ոլորտում իրանական կողմի ակտիվ նախաձեռնությամբ և հայկական կողմի պատրաստակամությամբ, մասնավորապես իրանագիտության ասպարեզում ձեռքբերումներ արձանագրվեցին:

ՀՀ - ԻԻՀ համագործակցությունը դրսևորվեց նաև մշակույթի բնագավառում: ՀՀ-ն ԻԻՀ-ին սահմանակից միակ քրիստոնյա պետությունն

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 370:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 375:

<sup>19</sup> Տե՛ս ՀՀ նախարարության գործության մասին 2005 թ. օգոստոսի 11 օրինակը:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 11, օր 184, թ. 93:

է: Սակայն Երկուստեք ձևավորված սերտ հոգևոր-մշակութային հարաբերությունները վկայում են իսլամ-քրիստոնեություն խաղաղ գոյակցության մասին: Քաղաքական առումով կրկնակի է արժևորվում այս իրողությունը՝ ա) չեզոքանում է Արևմուտքում լայնորեն տարածված ԻԻՀ-ի հակաքրիստոնեական քաղաքականության քարոզչությունը, ավելին՝ ստեղծվում է հակակշիռ, թե ի դերս է ելնում Աղրբեջանի կողմից պարբերաբար իսլամադավան աշխարհին հրամցվող այն հորինվածքը, թե իբր դարաբարյան հակամարտությունը հետևանք է հայերի կողմից դրսևորած կրոնական անհանդուրժողականության:

1994 թ. օգոստոսի 26-ին Երևանում էր գտնվում ԻԻՀ-ի պատվիրակությունը մշակույթի և իսլամական կողմնորոշման հանձնաժողովի նախագահ, Երկրի հոգևոր առաջնորդների խորհրդի անդամ՝ Հոջաթ-օլ Էլամ Թաղավիի գլխավորությամբ՝ մասնակցելու Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառ հայրապետի հուղարկավորությանը<sup>21</sup>: Յիշյալ պատվիրակությունը միակն էր իսլամական աշխարհից:

Երկու Երկրների հոգևոր-մշակութային համագործակցությունը նշանավորվեց կողմերի հոգևոր հուշարձանների վերադարձման և վերականգնման աշխատանքներով: Այս առումով ուշագրավ է, որ 1995 թ. հոկտեմբերի 13-ին կողմերի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր՝ Երևանի Կապույտ մզկիթի վերանորոգման և վերակառուցման մասին: Ի կատարումն այդ հուշագրի՝ սկսվեցին մզկիթի վերանորոգման աշխատանքները, որոնք իրականացվում էին իրանական կողմի կապիտալ ներդրմանը և Երկու Երկրների մշակութային փորձագետների հսկողության ներքո: Կապույտ մզկիթը կառուցվել է 1765 թ. Երևանի խան Ջուսեյն Ալիի օրոք և ունի 7000 քառակուսի մետր ընդհանուր մակերես, 24 մ բարձրությամբ մեկ միանրեթ և 28 խուց: Յայստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո մզկիթը որպես այդպիսին չի գործել, ծառայել է որպես Երևանի պատմակենդանաբանական թանգարան:

Խնդրո առարկա ժամանակահատվածում հիշարժան են հայ հոգևոր առաջնորդների այցերը Իրանի հայ հանայնը: Յայտնի է, որ մինչև 1958 թ. իրանահայ թեմերը վարչականորեն ենթակա էին Ս. Էջմիածնի կաթողիկոսությանը: Սակայն 1958-ից հետո, եթե տեղի ունեցավ Եկեղեցական պառակտում, դրանք անջատվեցին Էջմիածնից և վարչականորեն միացան Մեծի Տաճար Կիլիկիո կաթողիկոսությանը:

2000 թ. հուլիսի 17-ին Մեծի Տաճար Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա Քեշիշյանը ԻԻՀ կատարած այցի ընթացքում հանուիպեց ԻԻՀ նախագահ Ս. Խաթամիի հետ: Խաթամին նշել էր, որ ինքը հպարտ է լինել իրանցիների նախագահը՝ այդ բվում և սիրելի հայերի<sup>22</sup>:

Արամ Ա-ն իր հերթին նշել էր, որ Եկեղեցական համայնքների խորհուրդը 2000 թ. կրոնական Երկխոսության մի հատուկ հանձնաժողով է ստեղծել, որի իսլամ միակ ներկայացուցիչը Մերձավոր Արևելքում հ-

<sup>21</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, գ. 1, գ. 242, թթ. 27-31:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 6, գ. 67, թ. 41:

րանի ներկայացուցիչն է: Նույն թվականի հուլիսի 18-ին ՀՀ մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի՝ ԻԻՀ կատարած պաշտոնական այցի ընթացքում ԻԻՀ մշակույթի և իսլամական կողմնորոշման նախարարի հետ հանդիպման ժամանակ, իրանցի նախարարը նշել էր, որ իր երկիրը հատուկ ուշադրություն է դարձնում Իրանի Եկեղեցիների վերանորոգմանն ու պահպանությանը: Այդ ժրագրում իրենց առանձնահատուկ տեղն ունեն Իրանի հյուսիսում գտնվող Ս. Ստեփանոսի և Ս. Թաղեհի վանքերը<sup>23</sup>: Խսկապես, ԻԻՀ-ն ՀՀ-ի հարևան չորս երկրներից միակն է, որ պետական մակարդակով հոգածություն է ցուցաբերում իր տարածքում գտնվող հայկական Եկեղեցիների նկատմամբ՝ հարկ եղած դեպքում վերականգնելով դրանք: Ս. Թաղեհի վանքը, որպես պատմամշակութային արժեք, ներառված է UNESCO-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում, իսկ 2004 թ. մեծ շուրջով նշվել է Ս. Թաղեհի ուխտագնացության 50-ամյակը<sup>24</sup>:

2001 թ. ՀՀ և ԻԻՀ միջև ստորագրվեց «Համաձայնագիր հուշարձանների պահպանման բնագավառում համագործակցության վերաբերյալ»:

ԻԻՀ նախագահ Ս. Խաթրամի կոչը՝ 2001 թվականը հոչակել քաղաքակրթությունների երկխոսության տարի, մեծ արձագանք գտավ հայ հոգևոր-մշակութային կյանքում, քանզի նույն՝ 2001 թ., մեծ շուրջով նշվեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հոչակելու 1700-ամյակը: Այս առումով ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև համագործակցությունը, հիրավի, կարող է քաղաքակրթությունների երկխոսության լավագույն օրինակ լինել:

Իրանահայ համայնքի թեմական առաջնորդարանի հրավերով 2005 թ. օգոստոսի 23-28-ը ՀՀ մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պատվիրակությունը մեկնեց ԻԻՀ՝ ծանոթանալու ԻԻՀ-ում գտնվող և կառավարության կողմից ֆինանսավորվող հայկական պատմամշակութային հուշարձանների վերականգնման աշխատանքներին և համագործակցության կարգով համապատասխան գիտամեթոդական խորհրդատվությամբ օժանդակելու իրանցի մասնագետներին<sup>25</sup>: ՀՀ-ի պատվիրակությունը այցելեց Ս. Ստեփանոսի և Ս. Թաղեհի վանական համալիրներ, Դարաշամբի, Խոյ քաղաքի, Մահրազան և Գրիս գյուղերի հայկական Եկեղեցիներ, ինչպես նաև Զրամբարի շինարարության պատճառով տեղափոխված և նոր վայրում վերականգնված Ծործողի Եկեղեցի:

Այսպիսով, հոգևոր-մշակութային համագործակցությունը դրսևորվում է միջքաղաքակրթական երկխոսության պայմաններում և միմյանց հոգևոր-մշակութային կորողների նկատմամբ դրսևորած կողմերի հոգատար վերաբերմունքով:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 6, գ. 67, թ. 42:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 11, գ. 182, թթ. 50-51:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 11, գ. 183, թ. 80:

ՀՅ - ԻԻՀ մշակութային համագործակցության շրջանակներում անցկացվեցին մի շարք միջոցառումներ: 1993 թ. ՀՅ պատվիրակությունը մասնակցեց Թեհրանում տեղի ունեցած 11-րդ միջազգային կինոփառատոնին: 1994 թ. փետրվարի 1-12-ին ՀՅ-ը կրկին մասնակցեց Թեհրանի միջազգային կինոփառատոնին, իսկ հունիսին ՀՅ-ում անցկացվեց իրանական կինոֆիլմերի փառատոն: 1994 թ. հունիսի 17-ին Երևանի հանրապետական գեղագիտական կենտրոնի ցուցասրահում բացվեց «Նկարում են Իրանի երեխաները» ցուցահանդեսը: 1994 թ. սեպտեմբերի 5-15-ը Երևանում կայացավ իրանական կինոֆիլմերի փառատոն, իսկ Երևանի տիկնիկային թատրոնը Թեհրանում մասնակցեց տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնին:

Սակայն երկրորդ համագործակցությունը նշանավորվեց 1994 թ. նոյեմբերի 27-ին, երբ Թեհրանում ստորագրվեց «ՀՅ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, տուրիզմի և ՉԼՄ-ների բնագավառներում համագործակցության» համաձայնագիրը<sup>26</sup>: Համաձայնագրի 9-րդ կետում ամրագրված է երկու երկրների մայրաքաղաքներում մշակութային և կրթական կենտրոններ հիմնելու վերաբերյալ դրույթը:

Հայ-իրանական մշակութային համագործակցության մեջ կարևոր է նշել, որ ԻԻՀ-ում, ինչպես բոլոր բնագավառներում, մշակույթի ոլորտը ևս քաղաքականացված է: ԻԻՀ-ում մշակութային արժեքները արժենորելիս գործում է որոշակի գրաքննություն, թույլատրելիություն՝ ըստ իսլամական կրոնական բարքերի: 1990-ական թթ. ընդհանուր առմամբ թույլ էր մշակութային համագործակցությունը: 1999 թ. հունվարի 22-ին հայ-իրանական կապերի կոորդինացման կառավարական հանձնաժողովի նիստին մասնակցած ՀՅ մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարար Ռ. Շառոյանը նշում էր, որ մշակութային կապերում աջակցում էր Իրանի հայ համայթի «Արարատ» միությունը<sup>27</sup>: Պատճառներից էին նշված թույլատրելիությունը, ինչպես նաև այն, որ իրանական կողմը ավելի շահագրգրված էր իր խնբերը ՀՅ ուղարկելու, քան հայկական համույթներին ընդունելու:

2001 թ. ՀՅ նախագահ Ռ. Քոչարյանի ԻԻՀ կատարած պաշտոնական այցից հետո որոշակի ակտիվություն նկատվեց մշակույթի ոլորտում: 2002 թ. փետրվարի սկզբին Հայաստանի ազգային պատկերասրահում ԻԻՀ-ի դեսպանության մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ ներկայացվեցին իրանական արվեստի՝ մանրանկարչության, մետաղագործության, փորագրարվեստի բացառիկ նմուշներ: Ցուցահանդեսը նվիրվել էր Իրանի իսլամական հեղափոխության 23-րդ տարեդարձին<sup>28</sup>: Նման միջոցառումները կատարվում են «Ֆաջրի տասնօրյակ»-ի տոնակատարությունների շրջանակներում և այն երկրներում, որոնց հետ ԻԻՀ-ն ունի մշակութային կապեր:

<sup>26</sup> Տե՛ս ՀՅ ԱԳՆ ՊԴԱ, գ. 11, գ. 184, թ. 27:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 11, գ. 182, թ. 14:

<sup>28</sup> Տե՛ս «Ալիք», օրաթերթ, 04.02.2002:

2002 թ. հուլիսի 4-ին Թեհրանում Իրանի արվեստագետների տանը (Խանէ հոնարնանդան) բացվեց Հայաստանի նորարար փորձառական արվեստի կենտրոնի (ՍՓԱԿ) արվեստագետների ստեղծագործությունների երկշաբաթյա ցուցահանդեսը, որին ներկայացվեցին 14 հայ արվեստագետների ստեղծագործությունները<sup>29</sup>:

Երկողմ մշակութային հարաբերությունները նշանավորվեցին գրական կապերով: 2004 թ. հունիսին «Հայաստան-Իրան գրական-մշակութային կամուրջներ -2004» ծրագրի շրջանակներում Երևան այցելեցին իրանցի գրողներ: Մշակութային այս ծրագրի կազմակերպիչներն էին արտասահմանյան երկրների հետ մշակութայի կապերի հայկական ընկերությունը, Հայաստանի գրողների միությունը և ՀՀ-ում հիշ-ի մշակույթի կենտրոնը:

Մշակութային ակտիվ համագործակցությունը շարունակվեց 2005 թ.: Տարբեր ստեղծագործական խմբեր և անհատ կատարողներ նաև նաև կացեցին երկու երկրներում կազմակերպվող մշակութային միջոցառումներին և միջազգային փառատոններին, մասնավորապես՝

- Երևանի ժողարվեստի թանգարանում կազմակերպվել է իրանցի նկարիչների ցուցահանդես՝ Նվիրված Իրանի Խոլանական հեղափոխության 26-րդ տարեդարձին:

- ՀՀ-ում անցկացվել է «Հայաստան-Իրան մշակութային կամուրջներ» համաժողովը:

- «Ոսկե ծիրան» փառատոնին մասնակցել է ճանաչված իրանցի ռեժիսոր Քիառուսքամը, որի ֆիլմերը ցուցադրվել են փառատոնում:

- Սեպտեմբերի 13-ին ԱՕԲՍ-ում կազմակերպվել է Ֆերեշթե Ազարբանիի «Մանրանկարչություն և զարդարվեստ» ցուցահանդեսը<sup>30</sup>:

Այսպիսով, ՀՀ - ԻԻՀ միջմշակութային համագործակցությունը, սկզբնավորվելով 1990-ական թթ., աստիճանաբար կարողացավ իր մեջ ներառել ոլորտի տարբեր ճյուղեր: Հայ-իրանական երկողմ գիտակրթական և մշակութային համագործակցությունը պարբերաբար եղել է նաև երկու երկրների նախագահների ուշադրության կենտրոնում, այսինքն չի սահմանափակվել լոկ պատկան մարմինների (համապատասխան պաշտոնյաների) հանդիպումներով և հարցերի քննարկումով: Ավելին, համագործակցությունը, ունենալով երկողմ պետական շահագործություն, կարևորվեց հատկապես նախագահների փոխայցերով, որոնց ընթացքում քաղաքական և տարածքային հարցերին զուգընթաց օրակարգային դարձան նաև գիտակրթական և մշակութային համագործակցության ամրապնդման և զարգացման ծրագրերը:

**КАРЕН МКРТЧЯН – Армяно-иранское сотрудничество в области науки, просвещения и культуры в 1992–2005 гг. – Научно-образовательное и культурное сотрудничество Армении с ИРИ началось в 1990-е гг., постепенно охватило самые разные сферы и неизменно находилось в центре вни-**

<sup>29</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, գ. 8, գ. 86, թ. 175:

<sup>30</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, գ. 11, գ. 184, թթ. 92-93:

мания не только соответствующих органов управления, но и высшего руководства двух стран. Взаимные визиты глав наших государств, по ходу которых наряду с политическими и экономическими обсуждались и вопросы науки, просвещения и культуры, неуклонно укрепляли научно-образовательное и культурное сотрудничество ИРИ и Армении.

**KAREN MKRTCHYAN – *The Armenian-Iranian Scientific, Educational and Cultural Cooperation in 1992-2005*.** – The scientific, educational and cultural cooperation beginning in 1990s could gradually involve in it all spheres of the area. The scientific, educational and cultural cooperation periodically attracted not only the appropriate authorities, but also the attention of presidents. Moreover, the cooperation having bilateral governmental interests manifested in the visits of both presidents, during which together with political and economic issues, plans aimed at the important scientific, educational and cultural cooperation, were placed on the agenda.